ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի նախագահ Արա Զոհրաբյանի, անդամներ Մանե Կարապետյանի, Արմեն Հայկյանցի, Գառնիկ Թուխտարյանի, Լյուդվիկ Դավթյանի և Գառնիկ Սաֆարյանի,

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի շրջանավարտների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 07.04.2018թ. թիվ 7/12-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ի 5-րդ և 27-րդ կետերի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել (սահմանել) 2018 թվականի աշնան որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ սահմանված ժամանակացույցը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

Որոշում N 7/1-Լ
ք. Երևան
01 հոկտեմբերի 2018թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
01.10.2018թ. N 7/1-Լ որոշման

Հանձնաժողովի նախագահ՝
Արա Զոհրաբյան

2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. 2018 թվականի աշնան որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) ունկնդիրների (շրջանավարտների) կողմից առձեռն կարող են տրվել մինչև **2018թ. հոկտեմբերի 11-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին):
2. Որակավորման քննություններն անցկացվելու են հետևյալ հասցեում՝ **ք.Երևան, Զաքյան 7-2**:
3. Սահմանված ժամկետում դիմում ներկայացրած ունկնդիրները որակավորման քննություններին մասնակցելու համար պետք է նախապես գրանցվեն ստորև նշված քննությունների օրերին՝ ժամը **09^{00}-ից** մինչև **09^{45}**՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
4. Որակավորման քննություններն անցկացվելու են՝

	Քրեական ուղղվածություն		
N	**Մոդուլ**	**Առաջադրանք**	**ամսաթիվը և ժամը**
1.	Դեոնթոլոգիա	4 խնդիր	16.10.2018թ., ժամը 10.00
2.	Քրեական	միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կազմել	23.10.2018թ., ժամը 10.00
3.	Քրեական	դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմել	29.10.2018թ., ժամը 10.00

	Քաղաքացիական ուղղվածություն		
N	**Մոդուլ**	**Առաջադրանք**	**ամսաթիվը և ժամը**
1.	Դեոնթոլոգիա	4 խնդիր	16.10.2018թ., ժամը 10.00
2.	Քաղաքացիական	հայցադիմում կազմել	23.10.2018թ., ժամը 10.00
3.	Քաղաքացիական	վճռի դեմ վերաքննիչ բողոք կազմել	29.10.2018թ., ժամը 10.00